# Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | ՏՀՏ-ի կիրառման դերն ու նշանակությունը վերջնարդյունքների ապահովելու գործում պատմություն առարկայի դասավանդման ընթացքում միջին դպրոցում: |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Անուն, ազգանուն, հայրանուն<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Անուշ<br>Հովհաննիսյան<br>Շավարշի<br>Ուսուցիչ<br>093 28 19 87<br>Anushhovhannisyan50@gmail.com<br>Իմ հայրենիքը, Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն<br>5-12-րդ դասարաններ |
| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Կանաչուտի Գառնիկ Եփրեմյանի անվան միջնակարգ դպրոց, Այվազովսկու 1/1<br>Հեռ. 098 43-32-73<br>kanachut@schools.am |

Բովանդակությու
ն

**Ներածություն** 3
**Հիմնական բովանդակություն** 5
**Եզրակացություններ, առաջարկություններ** 15
**Օգտագործված գրականության ցանկ** 17

# Ներածություն

## Նպատակը եւ հետազոտական հարցը

Նորություն չէ այլևս, որ ՏՀՏ-ի կիրառումը ցանկացած առարկայի դասավանդման համար մեծ նշանակություն ունի: Եթե դիտարկենք ՏՀՏ-ն պատմություն առարկայի դասավանդման տեսանկյունից, ապա կառանձնացնենք դա, որպես դասն առավել պատկերավոր, ընկալելի, հետաքրքրաշարժ դարձնելու լավագույն միջոցներից մեկը:

Կյանքն արագ տեմպերով առաջ է շարժվում և, եթե նախկինում « Ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել» միտքը վերաբերվում էր բառից բուն իմաստով, ապա մեր օրերում կարող ենք վիրտուալ տեղափոխվել հազարամյակների խորքը և ականատես լինել պատմական դրվագների: Փորձը ցույց է տվել, որ աշակերտների մոտ առավել տպավորվում է այն դասանյութն, որն ուղեկցվել է նյութին առնչվող սահիկաշարով, կարճ տեսանյութերով, այսինքն ՏՀՏ-ի գործուն մասնակցությամբ: Հետևաբար թեմայի նպատակն է վեր հանել ՏՀՏ-ի կարևորությունը ոչ միայն դասի վերջնարդյունքներն ապահովելու միջոց, այլ նաև ժամանակի կարևորագույն պահանջ, որից հնարավորինս օգտակար օգտվելու կարողությունները պետք է իմանա ցանկացած ոք, ով ցանկանում է լիարժեք ինտեգրվել հասարակության մեջ:

Հետազոտական աշխատանքի հարցն է՝

Ի՞նչ դեր ունի ՏՀՏ-ի կիրառումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում վերջնարդյունքները ապահովելու գործում միջին դպրոցում Կանաչուտի միջնակարգ դպրոցի օրինակով:

Հետազոտական աշխատանքի ընթացքում կփորձենք հարցին պատասխանել՝ հենվելով դասապրոցեսի ընթացքում ձեռք բերված վերջնարդյունքները շոշափելի դարձնելու միջոցով:

Ներածությու
ն

| | |
|---|---|
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին.<br>• Լեզվական գրագիտություն և կարողունակություն,<br>• Սովորել սովորելու կարողունակություն,<br>• Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,<br>• Թվային և մեդիա կարողունակություն: |
| | |
| **Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | Կանաչուտի Գ. Եփրեմյանի անվան միջն դպրոց 6-րդ դասարան<br>14 աշակերտ՝ 10 տղա և 4 աղջիկ |
| | |
| **Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)** | Օգտագործված մեթոդներն են՝<br>• Քանակական<br>• Քարտային հարցման մեթոդ, |
| | |
| **Հետազոտության իրականացման ժամանակահատվածը** | 20.08.—20. 09. 2023թ. |
| | |

**Գրականության ակնարկ**

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

ՏՀՏ-ն 21-րդ դարի մեծագույն նվաճումն է, և բոլորովին էլ չպետք է խուսափել այս բնագավառը ինտեգրել մեր մասնագիտության մեջ: Նոր մոտեցումները մասնագիտության մեջ հնարավորություն են տալիս քայլել ժամանակին համահունչ: Աշակերտները հաղորդակցվելով տեղեկատվական տեխնոլոգիաների հետ նոր բացահայտումներ են անում, որոնք դրական ազդեցություն են ունենում իրենց հոգեհուզական աշխարհի վրա: Պատմություն և ՏՀՏ համագործակցությունը ապահովում է հանրակրթության մեջ անցյալի իրադարձությունները ներկայացնել ժամանակակից աշխարհի լեզվով. «Պատմությունը գիտություն է անցյալի մասին, բայց ապագայի համար», իզուր չէ ասված ճապոնական ասացվածքում:

Դիտակտիկայում ապացուցված է, որ ուսուցչի թշնամին դասի ժամանակ անգործությունն է: Այդ պատճառով էլ ուսուցչի աշխատանքում պետք է համաձուլված լինեն առարկայական պատրաստվածությունը և մանկավարժական վարպետությունը: ՈՒսուցման ընթացքը սկզբունքորեն չի կարող իրականացվել երկար ժամանակ՝ առանց ուսուցչի և աշակերտի միջև եղած մտավոր կապի:

Որպես ուսուցիչ փաստում եմ, որ դասի արդյունավետությունը մեծապես հենված է աշակերտ-ուսուցիչ փոխադարձ վստահության, հարգանքի վրա,ինչին հասնելը հիմնականում կախված է ուսուցչի մանկավարժահոգեբանական հմտություններից: Մեծանուն մանկավարժ, հումանիստ Յ. Ա. Կոմենսկին ասում է «Մեծ մարդու վեհությունը արտահայտվում է փոքր մարդկանց հետ նրա վարվելակերպում»:

Համակարգիչը արդյունավետ կարելի է

Հիմնական
բովանդակություն

Հիմնական բովանդակություն

օգտագործել, որպես ուսուցման միջոց: Այդ դեպքում նախապես ստեղծվում են ուսուցողական ծրագրեր, մուտքագրվում են համակարգիչ և այդ ծրագրի հիման վրա ստեղծվում է ուսումնական նյութ, որից աշակերտը կարող է օգտվել:

Ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է հաշվի առնել, որ աշակերտների աշխատանքը համակարգչի մոտ չպետք է գերազանցի 10-20 րոպեն:

Պետք է նշել,որ համակարգչի մոտ աշխատանքի ժամանակ ստեղծված նյարդահոգեբանական լարվածությունը թոթափվում է ստացված դրական արդյունքով և հակառակը աշխատանքի անարդյունավետությունը բերում է լարվածության աճին:

Ուսուցչի նպատակադրություններից կարող են լինել

Աշակերտներին սովորեցնել ինտերնետից օգտվելու հնարները, արդյունավետ կայքերը

Դասապրոցեսում կոնկրետ օրինակներ նշել,որոնք կվկայեն ինտերնետից օգտվելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը

Բացի կոնկրետ հանձնարարություններից՝ ինքնագործունեության մղել աշակերտներին և հնարավորություն տալ արտահայտվելու

Կազմակերպել «քաշած» նյութերի փոխանակում և ապահովել ինտերնետից օգտվելու փորձի ուսումնասիրում և տարածում:

Հիմնական
բովանդակություն

| Հետազոտության ընթացքը | Նորագույն տեխնոլոգիաները մարդկային ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ: Դրանք են թելադրում կյանքի ընթացքն ու ուղորդում ճանապարհը:Այսօր ակնհայտ է, որ քաղաքակրթության հետագա զարգացումը կախված է նրանից թե ինչպես կկառուցվեն մեդիայի և մարդու, մեդիայի և մշակույթի, մեդիայի և կրթության հարաբերությունները: Միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր լուծել այս խնդիրները:Աշխատանքի և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները,մեր օրերի մարդուն ստիպում են շարունակ սովորել և նոր հմտություններ ձեռք բերել՝ պատրաստ լինելով նոր մարտահրավերների գիտելիքի աշխարհում: Կրթությունը, որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար չի կարող հեռու մնալ այս գործընթացից:<br><br>Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության իրականացման գործում մեծապես կարևորվում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը, որը կնպաստի կրթական նոր միջավայրի ստեղծմանը: Համակարգչի օգտագործումը զգալիորեն կընդլայնի ուսուցման նյութի որոնման, հաղորդման, յուրացման հնարավորությունները: ՏՀՏ-ի կիրառումը որակական նոր բնույթ կհաղորդի դասապրոցեսին՝ տալով հնարավորություն դասին ինտեգրվելու ամբողջ դասարանին: ՏՀՏ-ի օգտագործումը որակապես կփոխի նաև ուսուցչի դերը. ուսուցիչը կդառնա ոչ միայն և ոչ այնքան գիտելիք հաղորդող, որքան սովորողի կրթական գործը կազմակերպող, Նրա հետ ուսումնական նյութը ընտրող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր:<br>Համակարգիչը պետք է դարձնել դպրոցի կառավարման,ուսումնական գործընթացի կազմակերպման,սովորողների առաջադիմության գնահատման, ծնողների հետ |
| --- | --- |

Հիմնական բովանդակություն

# Հիմնական բովանդակություն

տարվող աշխատանքի և արտադասարանային գործունեության իրականացման գործիք: Ժամանակակից հանրակրթական դպրոցի նպատակն է սովորողին ոչ միայն գիտելիքներով զինելը,այլ նաև որպես անհատների զարգացնելը և կատարելագործելը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել սովորողների անհատական հնարավորությունները և առանձնահատկությունները: Սովորողների հնարավորություններին և կարողություններին համապատասխան՝ մշակել ուսուցման կազմակերպման ձևեր ու մեթոդներ, որոնք կհամապատասխանեն հանրակրթական դպրոցի ինֆորմատավորմանը:

Ցավոք փաստ է, որ ոչ բոլոր աշակերտներն են սիրում պատմություն առարկան, այն համարելով ոչ ճշգրիտ՝ հեղհեղուկ գիտություն,և այստեղ ուսուցիչը բախվում է առարկան պաշտպանելու, բարձրացնելու խնդրի առջև: Տվյալ դասի թեմայի վերջնարդյունքներին՝ գիտենալ, մեկնաբանել,կարծիք հայտնել և այլն ուսուցիչը չի կարող հասնել, եթե առաջին հերթին չի ստեղծել հետաքրքրություն թեմայի շուրջ:Այսպիսի խնդրի հաղթահարման միջոցներից մեկը անկասկած կարելի է համարել ՏՀՏ-ն : Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է նաև հետաքրքրության առաջացում, այն աշակերտների մոտ, ովքեր «չեն սիրում» պատմություն առարկան և օգնում է հասնել որոշակի վերջնարդյունքի:

Տարբեր ոլորտներում կարելի է տեսնել ու ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաներ ազդեցությունները,
դրանց բերած փոփոխությունները:

Կրթությունն ամենազգայուն ու կարևոր ոլորտներից է , որի վրա ազդեցությունները լայն մասսաների համար են ակնառու, զգալի:

21-րդ դարը նշվում է, որպես գիտելիքի դարաշրջան, որտեղ գիտելիքն ունի սոցիալական և տնտեսական հիմնարար արժեք: Իսկ այսօր
երիտասարդությունը նկարագրվում է որպես

Հիմնական
բովանդակություն

Հիմնական
բովանդակություն

«Ցանցային սերունդ», որը ծագել է համացանցային մշակույթում և ներկայացնում է ցանցը, որպես սոցիալականացման և աշխատանքի անբաժան մաս:

Մանկավարժության մեջ կիրառվում են ՏՏ այնպիսի հնարավորություններ, ինչպես օրինակ Էլ հասցե, վիկիպեդիա, որոնք օգտագործվում են հետևյալ կերպով՝

- Աշակերտներին տեղեկատվության և կոնտենտի փոխանցում,
- Ուսուցչի և աշակերտի միջև կապ,
- Գնահատականների ներկայացում:

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներիհիմնական նպատակն է ՝ իրազեկ, տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետ գործածելու ունակություն ունեցող, բարոյական և օրինապահ անհատի դաստիարակում, ով կկարողանա ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել տեղեկատվությունը և դրա հիման վրա ինքնուրույն որոշում կայացնել, սեփական լուման ներդնել հասարակության առաջընթացի գործում:

Ոչ ոք չի վիճի, որ դասին ցանկացած տեղեկատվության օգտագործումը դրական ազդեցություն է ունենում, բայց կան դասեր,որոնց ժամանակ բավական է միայն պատկերներ ցույց տալ և արդյունավետությունը
պատրաստ է:

Դժվարություններ

Դասապրոցեսին ՏՀՏ–ներն ակտիվորեն օգտագործելու համար ուսուցիչը նախ և առաջ պետք է հմտորեն տիրապետի դրանց: ՏՀՏ–ի օգտագործումը դասապրոցեսին, ամենևին էլ չի նշանակում ուսուցչի ժամանակի տնտեսում, աշխատանքի հեշտացում: Բայց ճիշտ օգտագործելու դեպքում ենթադրում է ժամանակի խնայողաբար օգտագործում դասապրոցեսի ընթացքում: Յուրաքանչյուր ուսուցիչ, ով հաճախ է կիրառում ՏՀՏ, լավ գիտացում է թերությունները և
առավելությունները. պետք է հաշվի առնել՝

Հիմնական
բովանդակություն

Հիմնական
բովանդակություն

- Տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների հոգեբանական զարգացման վրա:

Այսպիսով ժամանակակից ուսուցիչը աշակերտներին ծանոթացնում է ցանցի ռեսուրսներին՝ օգտագործելով ինտերնետը և ցանում հրատարակված տեղեկություններ, որոնք ընդլայնում են աշակերտների մտահորիզոնը, զարգացնում քննադատական և պատմական մտածողությունը:

ՏՀՏ-ի արդյունավետ օգտագործման համար մեծ նշանակություն ունի ուսուցչի խոսքը, որը չպետք է փոխարինի համացանցի տեղեկություններին: Արդյունավետ յուրացման համար ուսուցիչը պետք է խոսի հասանելի լեզվով, ինչը համացանցում ոչ միշտ է պատահում: ՏՀՏ-ի կիրառումը ոչ միշտ է բերում արդյունավետության, հնարավոր է ուսուցիչը ինչ-ինչ պատճառով չհասնի իր առջև դրած նպատակներին: Դրա համար շատ կարևոր է հենց թեմայի դասի ընտրությունը: Կյանքն անցնում է գիտությունը արագ տեմպերով զարգանում է, ՏՀՏ-ները նույնպես, ուստի պետք է օգտագործել դրանց առավելությունները դասապրոցեսում՝ ներմուծելով ժամանակակից մեթոդներ և հնարներ:

ՏՀՏ-ի հիմնական առանձնահատկությունները՝

- Ձևավորում է ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ավանդականից մի նոր որակ,
- Հեշտացնում է նյութի յուրացման ընթացքը,
- Դասը աշակերտի համար դառնում է ավելի տպավորիչ,
- Մեծանում է դիտողականության մակարդակը,
- Մեծանում է առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը:

ՏՀՏ-ի կրառման պարազայում տարբերվում է գործունեության երկու տեսակ՝ ուսուցանող և ուսումնական: Առաջինը բնութագրվում է համակարգչի հետ աշակերտի անմիջական գործունեությամբ, որը որպես կանոն ընթանում է

Հիմնական
բովանդակություն

Հիմնական
բովանդակություն

առանց ուսուցչի միջամտության: Երկրորդ տարբերակը բնութագրվում է ուսուցչի համակարգչի հետ գործունեությամբ: Այս դեպքում համակարգիչը օգնում է ուսուցչին ուսումնական գործընթացը ուղղորդելու հարցում:

ՏՀՏ-ները կարելի է կիրառել դասապրոցեսի տարբեր փուլերում : Համակարգչի օգտագործմամբ նոր նյութը հաղորդելիս կարեի է կազմակերպել դաս-դասախոսություն՝ ճնորհանդեսի տեսքով, որը հնարավորություն կտա աշակերտի մտքը սևեռելու առավել կարևոր հարցադրումների վրա:

Համապատասխան թեմաները դասավանդել եմ ավանդական դաս-դասարանային մեթոդով:

Հանձնարարել եմ թեմայի յուրացման մակարդակը ստուգելու համար պատրաստված հարցաթերթիկներ և գրանցել արդյունքները:

Հաջորդ թեմաները դասավանդել եմ ՏՀՏ կիրառման միջոցով:

Գրանցել եմ արդյունքները ՏՀՏ գնահատման գործիքների օգնությամբ:

Համեմատել եմ արդյունքները:

ՏՀՏ-ի կիրառմամբ իրականացված դասերը ավելի արդյունավետ են եղել և գրանցել եմ բարձր ցուցանիշ:

Աշակերտների համար ավելի բովանդակալից, հետաքրքիր և նույնիստ «հրավիրող» է եղել ՏՀՏ-ի կիրառումը:

ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել; Արդյունքում աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակություն: Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում . դասարանում, շրջապատում կա մի բան, որ կախված է իրենից: Հայտնի է որ մարդկան մեծամասնությունը մտապահում է լսածի 5 տոկոսը և տեսածի 20 տոկոսը: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա նօգտագործումըբարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50 տոկոս:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսի տարբեր փուլերում

1. Նոր թեմայի ներկայացում: Դասի թեման ներկայացվում է լուսանկարների, տեսանյութերի, գծագրեր, շարժանկարներ, ձայնի օգնությամբ: Նմանատիպ դասերի ընթացքում ստեղծվում է իրական շփման

Հիմնական
բովանդակություն

Հիմնական
բովանդակություն

իրավիճակ:

2. Ուսուցչի բացատրություններին ուղեկից: Օգտագործվում են կոնկրետ դասերի համար ստեղծված նյութեր՝ համառոտ տեքստեր, տեսանյութեր և այլն:
3. Աշակերտի անհատական աշխատանք: Ուսուցիչը դառնում է ուղեկից, ով ցույց է տալիս ճանապարհը, բայց ճանապարհի ամբողջ «Ծախսն» իր վրա չի վերցնում:
4. Գիտելիքի ստուգում: Համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը:

Ի՞նչ է ստանում ուսուցիչը ՏՀՏ-ի կիրառման միջոցով

1. Տեսնում է իր աշխատանքի արդյունքը:
2. Ստանում է զգացողություն,որ իր ժամանակը ծախսվել է արդյունավետ:
3. Անընդհատ զարգանում է ու կատարելագործվում, որպես մասնագետ:

Ստորև կփորձեմ ներկայացնել դրանցից մեկը:

Դասարան՝ VI

Առարկա՝ Հայոց պատմություն

Թեմա՝ Հայկական լեռնաշխարհի

Գետերը, լճերը, բնակլիմայական պայմանները:

Դասի նպատակը՝ Նպաստել աշակերտների մոտ Հայկական լեռնաշխահի աշարհագրական դիրքի, սահմանների վերաբերյալ գիտելիքի ձեռք բերմանը: Աշակերտների մոտ զարգացնել գիտակցություն՝ Լեռնաշխարհը, որպես հայերի նախահայրենիք ճանաչելուն:

Տեղեկանան Հայկական լեռնաշխարհում առկա խոշոր գետերի և լճերի մասին:

Տիրապետեն Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմանների առանձնահատկություններին:

Հիմնական բովանդակություն

Հիմնական
բովանդակություն

Դասի անհրաժեշտ պարագաներն են՝ դաստգիրք, տետր, քարտեզ, համակարգիչ, պրոյեկտոր, դասի նյութին համապատասխան սահիկներ, որոնք նախապատրաստել եմ նախօրոք և հարցաթերթիկներ, որը կազմված է համակարգչով:

Աշակերտների մոտ գեղագիտական ճաշակ ձևավորելու համար ցուցադրությունը սկսում եմ գեղեցիկ, գունավոր տառերով գրված հայկական լեռնաշխարհ և լեռնաշխարհի խորհրդանիշ Արարատ լեռան պատկերով: Այնուհետև լեռնաշխարհը աշակերտների աչքի առջև հառնում է քարտեզագրությամբ, աշակերտները համեմատում են իրենց առջև դրված ատլասի քարտեզի հետ:

Գետերը և լճերը ներկայացնելիս աշակերտների համար ընտրել եմ ավել դյուրին, դժվար մոռացվող, ընկալելի մեթոդ՝ յուրաքանչյուր լիճ և գետ ներկայացնելիս ցուցադրել եմ իրեն առանձնահատուկ խորհրդանիշը:

Որևէ գետ կամ լիճ ներկայացնելիս համակարգչով ցուցադրվում է տեղանքը, նշվում ներկայիս գտնվելու վայրը: Խոշոր գետեր՝ Արաքսը, Եփրատը, Տիգրիսը ներկայացնելիս որպես խորհրդանիշներ, ընտրել եմ Աստվածաշունչը և հոգատար մայրը: Այնուհետև Հայկական լեռնաշխարհի լճերը ներկայացնելուց, բնութագրելուց հետո՝ աշակերտներին հանձնարարում եմ Եփրատ և Տիգրիս գետերի տրամաբանությամբ առաջնորդվելով, օգտվելով ՏՀՏ գործիքներց ստեղծեն սլայդ:

Աշակերտների մեծամասնությունը ստացավ հետևյալ պատկերը՝

Սևան լիճ — որպես առանձնահատկություն Իշխան ձուկ,

Վանա լիճ —որպես առանձնահատկություն Տառեխ ձկնատեսակ,

Ուրմիո լիճ — առանձնահատկությունն՝ աղիություն:

Բնակլիմայական պայմաններ ենթավերնագիրը ներկայացվել է ցրտաշունչ ձմռան և կիզիչ ամռան պատկերներով, ինչպես նաև մեր բնակլիմայական պայմաններին հարմարվող պտղատու այգիներով: Դասի ընթացքում աշակերտները ակտիվ էին, հետաքրքրված, այն աշակերտները, ովքեր պասիվ էին ավանդական դասի ժամանակ, սկսում են ակտիվ աշխատել:

Դասի ավարտին կատարվեց անդրադարձ՝ հասկանալու համար որքանով են ընկալել դասի

Հիմնական
բովանդակություն

Հիմնական
բովանդակություն

առանցքային գաղափարները: Յուրաքանչյուր աշակերտի բաժանվեց քարտեր, որոնցում թեմային առնչվող հասկացություն էր գրված: Իմ կողմից հնչեցված հասկացությանը համապատասխան քարտ պետք է բարձրացնեին աշակերտները: Անդրադարձից պարզ դարձավ, որ դասարանի մեծամասնությունը ընկալել էր նյութը:

Դասարանում անցկացվող հոգեբանական և մանկավարժական ուսումնասիրությունները ցույց են տվել,որ հիմնական դպրոցում ՏՀՏ հնարավորությունների օգտագործումը նպաստում է սովորելու մոտիվացիայի բարձրացմանը, տեսողական-փոխաբերական, տեղեկատվական մտածողության զարգացմանը: Այն աշակերտները, ովքեր ունեն խորը գիտելիքներ, նրանց մոտ ձևավորվում է համառ, ճանաչողական հետաքրքրություններ և զգանում է գործնականում ձեռք բերված գիտելիքները ինքնուրույն կիրառելու ունակությունը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ դասարանում ՏՀՏ կիրառմամբ կրթական գործընթացը միտված է տրամաբանական մտածողության, երևակայության և անկախության զարգացմանը: Երեխաները հետաքրքրված են, ներգրավված են ստեղծագործական որոնման մեջ:

Վստահ եմ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կարող է փոխակերպել ավանդական դպրոցական առարկաների ուսուցումը՝ հիմնավորելով երեխաների աշխատանքը, օպտիմալացնելով ուսումնական նյութի ընկալման և մտապահելու գործընթացները և որ ամենակարևորն է՝ սովորելու նկատմամբ երեխաների հետաքրքրությունը բարձրացնելու արդյունքում ավելի բարձր մակարդակի:

ՏՀՏ գործելաոճը հնարավորություն է տալիս աշակերտներին հաջորդ դասի համար առաջադրանքներ տալ. Օրինակ Հայոց պատմության հաջորդ դասը պատմավարչական բաժանումն է: Աշակերտները սիրով պատրաստակամություն հայտնեցին պատրաստել ՏՀՏ դաս, ուր կցուցադրվի պատմական բաժանումը՝ համեմատելով այն ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքի և բաժանման հետ: Կցուցադրվի սահիկով Հանրապետության մեջ ներկայիս ընդգրկված նահանգները:

Հիմնական
բովանդակություն

Հիմնական
բովանդակություն

| | |
|---|---|
| | |

## Հիմնական բովանդակություն

**Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին**

Արդի աշխարհում մանկավարժները ունեն գերխնդիր՝ դպրոցում դասապրոցեսը կազմակերպել հնարավորինս հետաքրքիր, տարբերվող, մոտիվացնող, քանի որ անցյալի միատոն դասապրոցեսը այլևս հետաքրքիր չէ մերօրյա երիտասարդությանը:

Այդպիսի դաս փորձեցի կազմակերպել հիմնական դպրոցում, որի ընթացքում աշակերտները ոչ միայն լսողի դերում էին, այլև ընդգրկված էին դասի բոլոր փուլերում:

Նրանք ինքնուրույն ստեղծեցին իրենց համար հիշվող առանձնահատկություն, որով կտարբերակեն մեր լեռնաշխարհի խոշոր լճերը:

Ակտիվորեն մասնակցեցին քննարկմանը:

Արդյունքում ունեցա դասապրոցես, ուր անտարբերության մթնոլորտը բացակայում էր: Ցանկացած դասի թեմայի վերջնարդյունքին հասնելու նախապայմանը մասնակցային դասի կազմակերպումն է, ինչը այս պարագայում կարելի է ասել հաջողությամբ գրանցեցինք:

Ապահովեցինք վերջնարդյունքները՝

- Նպաստեցինք աշակերտների մոտ Հայկական լեռնաշխարհի գետերի, լճերի մասին գիտելիքի իմացությանը:
- Կարողացան ճանաչել աշխարհագրական տեղանքը, իմացան, որ պետության տարածքում են ներկայումս գտնվում:
- Բնութագրեցին լեռնաշխարհի բնակլիմայական պայմանները:

Այս ամենը նպաստեց աշակերտների մոտ հայրենիքի նկատմամբ ճանաչողական գիտելիքի բարձրացմանը:

Ձևավորեց սեր, հոգատարություն հայրենյաց հողի նկատմամբ:

Նպաստեց աշխարհագրական որոշ գիտելիքների ամրապնդմանը:

Դասի ընթացքում գրանցած արդյունքներն են՝

- Համագործակցեց ինֆորմատիկա առարկայի հետ
- Մեծացավ հետաքրքրությունը առարկայի նկատմամբ
- Նպաստեց աշակերտների գործնական

| | |
|---|---|
| | իմտությունների զարգացմանը<br>• Կիրառելի է և առկա և հեռավար դասերի ժամանակ: |
| | |

# Օգտագործված գրականության ցանկ


1. ՈՒսումնական նյութեր «Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր Երևան 2008
2. «Հանրակրչություն» 1998
3. Modern ժամանակակից կրթական Սելևկո Գ. Կ. տեխնոլոգիաներ
4. Կոլեսնիկովա Յու. Առաջին տեղ համակարգչին 2007
5. Համացանց